

5.4. 2012 թվականի հուլիս ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, հուլիսին օդի միջին ամսական ջերմաստիճանն եղել է նորմային մոտ մի փոքր դրական և բացասական շեղումներով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին և երրորդ տասնօրյակներում եղել է նորմայից ցածր 1-2 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ նորմային մոտ:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում և Արարատյան դաշտավայրում կազմել է +28 +33°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +25 +30°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +22 +25°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում՝ +22 +27°C (Մեմյոնովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ +18°C):

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է հուլիսի 18-19-ին: Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում գրանցվել է +32 +37°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +30 +35°C, ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում և Սյունիքի նախալեռներում՝ +23 +28°C (ք.Գյումրիում (ՀՀ Շիրակի մարզ)՝ +30°C):

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում կազմել է +8 +13°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +11 +16°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +13 +18°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +16 +21°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հուլիսի 1-2-ին: ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում գրանցվել է +6 +11°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +8 +13°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +10 +15°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +12 +17°C:

Ամսական տեղումների քանակը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից բարձր: ՀՀ Կոտայքի և Շիրակի մարզերում այն կազմել է նորմայի 116-276%-ը (ք.Գյումրիում՝ 68%, Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ 90%), ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 168-281% (Մեմյոնովկա գյուղում՝ 93%), ՀՀ Արագածոտնի մարզում՝ 163-273%, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում՝ 102-186% (ք.Ստեփանավանում (ՀՀ Լոռու մարզ)՝ 86%), ՀՀ Սյունիքի մարզում՝ 153-254% (ք.Սիսիանում՝ 424%), Արարատյան դաշտավայրում՝ 160-373% (ք.Արտաշատում (ՀՀ Արարատի մարզ)՝ 424%):

Հուլիսի 1-ին, 4-ին, 9-10-ին, 15-ին և 30-31-ին տարածաշրջանների զգալի մասում, 2-3-ին, 5-ին, 8-ին, 11-ին, 13-14-ին, 16-ին և 19-21-ին առանձին վայրերում դիտվել են տեղումներ:

Հուլիսի 3-ին, 9-ին, 16-17-ին, 19-ին և 31-ին առանձին կայաններում դիտվել է մառախուղ 16-500 մ տեսանելիությամբ: Հուլիսի 2-ին, 4-ին, 7-ին, 9-ին, 14-ին և 21-24-ին տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 10-16 մ/վրկ, պոռթկումները՝ 19-30 մ/վրկ: Հուլիսի 1-ին, 4-ին և 7-8-ին առանձին կայաններում դիտվել է կարկուտ 1-4 սմ տրամագծով:

Հանրապետության գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 90-160%-ը:

Մեծագույն մակարդակը հուլիսի 15-19-ին բարձրացել է 2 սմ-ով և կազմել 1 900.48 մ, այնուհետև իջել է 4 սմ-ով և հուլիսի 31-ի դրությամբ կազմել 1 900.44 որը 2011թ. նույն օրվա համեմատ բարձր է 2 սմ-ով: Լճից բաց թողնված ջրի քանակը կազմել է 69.206 մլն. խոր. մ: